

ՄՈՐ ՅԻՇԱՏԱԿԸ

Ժիրք զինդ ոսկի ի քիթ խողի, այնպէս
կնոջ շարարարոյի գեղեցկութիւն»

(Առ. Սողոմ. ԺԱ—22):

«Դմաստուն կանայք շինեցին տունս, իսկ
անզգամբն ձեռօք իւրեանց կործանեցին»:

(Առ. Սողոմ. ԺԹ.—1):

Ա.

Այդ օրը շատ արցունք քամեց իւր ցամաք աչքերից ծեռունի Միքայէլը: Մակարենց տունը վաղ առաւտուանից հետզհետէ լցուում էր հարևաններով: Մարդ թէ կին, բարեկամ թէ օտար, ամէնքն էլ գնում էին զիւլի մեծատան՝ Միքայէլի կնոջը՝ Շողեր տատին «ողորմի» տալու, մի երկու կաթիլ արցունք թափելու իրբք նշան յաւիտենական հրաժեշտի: Հասակաւոր կանայք շարէշար իջնում էին կտուրից սանդուղքով, տղամարդիկ բակի դռնիցն էին գալիս Կէս ժամուայ մէջ տունը սգուուրներով ու յուղարկաւորողներով լցուեց:

«Խուբաւոր» (բրգաձե) տան յարկի տակ, պատուաւոր անկեան կողմը, հասարակ կտաւէ տկնակի վրայ, կարմիր շիլայ վերմակի տակ դիակնացած պառկած էր Շողեր տատը: Ուղիղ էր թէ չէ, չգիտեմ, միայն նրա գլխավերկումը կանգնած կանայք նրա ցաված դայլուկ դէմքի վրայ ողորմածութիւնն ու բարեսրտութիւնն էին պաղած տեսնում: Նրանք ափսոսում, իրար շշնջում էին հանգուցեալի առաւելութիւնները. ոմանք ակամայից, ոմանք էլ վայելչութիւնից ստիպուած աշխատում էին ողբական ձայներ հանել և իրենց արցունքն էլ խառնել հարազատների արցունքի հետ: Հանգուցեալի անկողինը ծնկաչոք շրջապատել էին որդիները, հարսները, աղջականներն և սրտայոյզ վայնասունով լալիս էին, Թլիսավերնում, կանանց մէջ համեստ դիրքով կանգնած էր ծերունի Միքայէլ՝ հանգու-

ցեալի ամուսինը: Եօթնասնամեայ ծերունու աչքը ցամաքել էր. սակայն սրտի յուղմունքը, շրթունքների կծկումն, մարմի ջը-դաձութիւնները, խուլ, խեղդող հեկեկանքը բամում էին նրա աչքերից վերջին կաթիւնները: Նա սաստիկ էր մղկտում, բայց աշխատում էր զապել իրեն, որովհետև անհամեստութիւն է ա-մուսնուն կնոջ մահուան համար վիշտը բարձրածայն արտա-յայտել Ծերունի Միքայէլի երեակայութեան առաջ պատկե-րանում էր անցեալը, երբ ինքն իրեւ գիւղի կտրիճ երիտասարդ շատ հասակակիցների նախանձը շարժեց գեղանի Շողերին կը-նութեան առնելով: Ապա յիշեց երբ հայր եղաւ առաջին երկու որդոց, որոնք այժմ ամուսնացած էին և զաւակների տէր: Անցեալից նրա յիշողութիւնը կտրուեցաւ և տանջող ներկայի վրայ կենդրոնացաւ: Իրականութիւնն այժմ այն է, որ ինքն անզօր ծերունի է: Ամուսնաւոր զաւակներն ու նրանց կանայք իրենց հոգածութեան միայն աւելորդ մասը պիտի բաժին տան նրան: Նա իրան սոսկալի մենակ զգաց և անպաշտպան ու նո-րից գողացին ձեռքերը, ցնցուեց մարմինը և ծռուեցան շը-թունքերը: Բայց իւր ցաւը մոռացաւ նա. յանկարծ նրա ուշքը կենդրոնացաւ մօր կրծքի վրայ ընկած-բեկ-բեկ ձայնով մղկտացող պատանու վրայ: Պատանեկական մի սիրուն շիկահեր գլուխ մերթ վեր ելնում, մերթ վար էր իջնում հանգուցեալի կրծքի վրայ: Շարմաղ շրթունքները որոնում էին ցամքած ստինքը, համբոյր սփոռում դէմքին ու կրծքին: Առաջուայ գուրեկան ջեր-մութիւնը չգտնելով պատանին յուսահատ գլուխը վեր էր բարձ-րացնում, թաթիկներով անինայ զարկում իսած աչերին, ու վշտից վարդ կարած դէմքին, ապա նորից խոնարհուում, նորից և մայրիկ ջան» աղեկտուր ձայնով ընկնում ու արցունքով լուս-նում մօր կուրծքը:

Պատանին հանգուցեալի վերջնակն էր, տասն և մի տա-րեկան Մանուէլը: Անդրանիկների ամուսնութիւնից յետոյ հօր և մօր սէրն ամբողջապէս կենդրոնացել էր փոքրիկ Մանուէլի վրայ: Նա նրանց ծերութեան ուրախութիւնն էր ու միսիթա-րութիւնը: Այժմ նա զրկուեցաւ մօր խնամքից և որը մնաց:

Եւ վայ այն պատանուն, որ զրկուում է մօր գգուանքից և ըհարսների՝ եղբօրց կանանց խնամքին է մնում. մանաւանդ ևթէ նրանց մէջ «չար ոգի» էլ կայ:

Ծերունի Միքայէլը կրտսեր որդուն մայրազուրկ տեսնե-լով իւր ցաւը մոռացաւ: Իսկ փոքրիկ Մանուէլն որ չէր յիշում թէ «չարոց դուլ» հարսի իշխանութեան տակը մնաց և էլ չկար մայրը, որ պաշտպանէր նրան հարսի նախատինքներից, առա-

մել էր մղկառւմ, առաւել ծեծում գլուխը և բորբոքում արտասուբի աղբերակները:

Յուղարկաւորները մոռացան ննջեցեալին կարծես. Նրանց սպի առարկան փոքրիկ պատանին դարձաւ: Մանուէլի անկեղծ, անսփոփանք վիշտը նման յոյզեր յառաջ բերեց և սպազիր կանաց և մարդկանց մէջ:

Վերջապէս լսուեցաւ թէ «էրէցն եկաւ»: Դիւղի վերին թաղից, եկեղեցուցն էր գալիս Տէր Դ.: Մի միջահասակ լայնաթիկունք, մեծ քթով ծերունի էր, գիւղի սիրելի քահանան: Կապայի վրայ հագել էր իւր «կարճիկը», գլխին գառան մորթուց կամիլաւկա, ձախ թեկ վրայ ծալած չիթ շուրջառն էր ձգել, ձեռքուաը կաշէկաղմ արծաթախաչ Մաշտոցը բարձր բըռնելով, աջումը ձեռնափայտ—գաւազան կրում: Նա առջևը ձըգած տիրացու Պետրոսին, որ խաչվառն էր տանում, ետևից հինաւուրց ժամկոչ Գասպարին որ բուրվառն էր բերում, ո՛ղորմեա ինձ, Աստուած, սաղմոսը քաղելով շտապ շտապ դէպի Մակարենց տունն էր գնում: Ծերունին իսկական ժողովրդի զաւակ էր. նա շատ լաւ էր հասկանում գինդալ ընդ ինդացողը, լալ ընդ լացողաւ: Գիտենալով որ իւր հօտի մէջ ննջեցեալի անկողնի շուրջը սոսկալի սուգ են անում, նա շտապում էր արագ քայլերով գնալ, շուտով դիակը տանից հանել և այսպիսով ինայել ողբացողներին:

Քահանան Մակարենց բակը մտաւ: Պատերի տակ նստած ու կանգնած աղամարդկանց բազմութիւնը պատկառանքով «փափահիներ» հանեցին և ընդունեցին հայր քահանայի ողջոյնը: Սրահում հաւաքուածները նրան ճանապարհ բացին և նա տուն մտաւ: Նրա ներկայութիւնը պատկառանք և միիթարութիւնն էին ազդում. լացի ձայները, հեկեկանքները զապուեցան, մեղմացան: Նա վրան ձգեց շուրջառը, օրհնեց լուացման ջուրը և դիակը յանձնեց կանանց, որ տանեն լուանան և պատանեն:

Կտակի մէջ պինդ կարած և նաշի վրայ դրած դիակը նորից քահանայի առաջը բերին: Սկսուեցաւ ստան կարգը: Խնկան անուշ հոտը կապոյտ քուլաներով դէպի երդիկը բարձրացաւ: Հաղիւ էր քահանան երգել «Դատեա, Տէր, զայնոսիկ» սաղմոսը, երբ մի սոսկալի ծղրտոցով մէկն ընկաւ դիակի վրայ: Մանուէլն էր: Նրա առջև կտակի մէջ կարուած էր նա, որին մայր էր անուանում: Պատանին չտարաւ այդ վիշտը և դալկացած նրա վրայ ընկաւ: Նրա սուգը բազմութեան սգով լցրեց տունը: Զգացուեցաւ և բարի հովիւը: Ծերացած աշքերումն արցունքը կոխեց. Էլ չկարողացաւ կարդալ: «Տէր մի համարիր զայս մեղս

ասելով, կարգը կիսակտուր թողեց, ծալեց Մաշտոցն առաջ ընկաւ և հրամայեց ժնաշը վերցնել: Չորս յաղիշտանդամ գիւղացիքին թոցրին նաշը. երկուսն ուշագնաց պատանուն գրկեցին և տխուր թափօրը դէպի եկեղեցին ուղղուեցաւ:

Թաղեցին Շողեր տատին: Նրա թարմ հողաբլրից բռնութեամբ խլեցին մօր «Քաղցր յիշատակ» Մանուէլին և կիսակենդան տուն բերին:

Բ.

Շողեր տատի մահից ուղիղ երեք տարի յառաջ էր. Միլուսնկայ անուշ գիշեր: Գիշերուան խաղաղութիւնը իջել էր գիւղի վրայ, Յունիսն էր. ուստի և աների բակերից մակաղած տաւարի շնչառութիւնն ու որոճի ձայնն էր լսում միայն: Մերթ ընդ մերթ էլ գիշերապահների «է՛հէ՛հէ՛յ» աղաղակը և շների հաջոցը: Քնած չէին միայն Մակարենց տան հասակաւորները: Երեխաներին տանը քուն դնելուց յետոյ, Միքայէլը իւր կնոջ, աւագ որդու և անդրանիկ հարսի հետ քաշուել էին «յօդէն»: «Բուլիսարու» երկու կողքում գլուխները քարշ նստած էին տան աւագն ու իւր կինը: Փոքր ինչ ներքև նստած էին որդին ու հարսը: Ամենքն էլ մտախոհ էին և լուս:

— Գասպար, որդի, շան հաչոց կայ դրան. վերկաց տեսչեկման արդեօք: Կարելի է նա է:

— Այ մարդ, զուր բան է քո արածը. մի տղայ որ իւր հօրն ու մօրը ականջ չանի, օտարին իսկի չի լսի: Չար. սատանէն մտել է որդուդ սիրած. իւր ուզածը պիտի անի:

— Ա՛խ, իմ շէն տունն եմ ափսոսում, չեմ ուզում բաժանութիւն լինի, քանդուի, քանի դեռ ես կենդանի եմ, թէ չէ գլուխն ու քարը, թող զնար ամնէր:

— Իմ սրտիս մէջն էլ կարծես տպաւորուել է, հայրիկ, որ այդ աղջիկը մեր տան վրայ անասելի թշուառութիւն պիտի բերի... երեկ շատ ինդրեցի...

— Վերկաց, որդի, սանահէր Կիրակոսն է, ընդհատեց որդուն հայրը. շները վրայ առուին, հասիր, թող ներս գայ տեսնենը ինչ բարի համբաւ է բերել:

— Խելքս բան չի կտրում, այ մարդ, զուր բան է...

Բանը նրանումն է, որ Միքայէլի երկրորդ որդին՝ Մելքոնը սիրել էր Թորոսի փոքր աղջիկը, գեղեցիկ նազլուին: Թորոսենց տունը գիւղի մէջ կոուարար, չար, նախանձու ցեղի վարկն ունէր: Նրանց տան աղջիկները, որ տուն որ գնացել էին իբրև հարս, բաժանութիւն էին ձգել, կագու կոիւ և քան-

դել էին շէն աները: Այդ երկիւղից շատ անգամ Միքայելը, իւր կինը, եղբայրն ու սրտացաւ ազգականները համոզել էին Մելքոնին, որ ձեռք վերցնի նազոււից: Սակայն Մելքոնը երկու ստքը մի մաշիկի մէջ դրած պնդում էր թէ նազուն է որ կայ. ուրիշ աղջիկ նա չի առնի ու կերպարասի հօր տանից, տեղից, կարողութիւնից ձեռք վերցնել, ջոկուել մի փոքրիկ տնակում ապրել նազոււի հետ, թէկուզ գիւղի նախրչութեանը կարօտի: Ծնողների կողմից բուռն ընդդիմադրութիւն տեսնելով Մելքոնը սրտնեղել էր ու վերջին ժամանակները տուն չէր գտնիս քննելու, այլ ջրաղացումն էր քնում, ջրաղացպանի հետ: Երկու օր առաջ նա ջրաղացպան Յակոբի ձեռքով լուր էր դրկել հօրը թէ, եթէ երեք օրից յետոյ նազոււին չեն ուզի իրեն հարսնացու, ինըը կերպայ նշան կդնի, կսսակուի և բաժան կապրի: Միքայէլի սիրած կրակն ընկաւ այս յանդուն պատգամից: Նա կարող էր դուրս վոնդել տանից անհնազանդ որդուն, բայց համագիւղացիների առաջ իւր վարկը կընկնէր, իւր շէն տունը նշանակութիւն կը կորցնէր, եթէ բաժանուէին որդիք: Զէ՞ որ գիւղացուտան շինութիւնը եղբայրների անբաժանութեան մէջն է: Մէկ խօսքով թասիրը չը չտարաւ: Մտածեց մի վերջին փորձ անել: գիմեց գիւղի սիրելի «իրիցուն» հայր տէր Դ. ու իբրև հոգևոր հօր ինդրեց, որ համոզէ նրա մոլորուած որդուն ձեռք քաշելու Թորոսենց աղջկանից: Խոհեմ քահանան մերժեց նրա ինդիրը:

—Միքայէլ եղբայր, դու հասկացող մարդ ես, երկար տարի էլ իմ երեցփոխանն ես եղել. դու կարող ես իմ դրութիւնը հասկանալ: Ես անարժան տեղովս քահանայ եմ. քահանայ ասածդ ժողովրդի հայր կնշանակէ: Իսկ հայրը չպէտքէ խարէ իւր հոգևոր որդիներին: Թորոսենց տունն էլ իմ զաւակներն են ինչպէս և ձեր տունը: Ես ինչպէս գնամ քո որդու մօս վատաքանեմ Թորոսենց աղջկան: Ասուած է թէ «չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի»: Վաղը կիմացուի և ես կրանամ վատամարդի և խոռվութեան առիթ: Զէ, եղբայր, ինդրում եմ քնի չնեղանաս ինձնից, ես այդ գործը յանձն չեմ առնի:

Այս մերժումից յետոյ Միքայէլի յոյսը սանահէր կիրակոսը մնաց: Նա կանչեց նրան, ինդրեց որ յանձն առնի գնալ ջրաղաց և «մոլորուած» որդուն համոզի դառնալ չար ճանապարհից: Սանահէր կիրակոսը կատարեց իւր սիրելի կնքահօր խնդիրը և այժմ այստեղից էր վերադառնում:

—Սանահէր, եարար բարի համբաւմվ ես գալիս թէ չէ, անհամբերութեամբ հարցրեց Շողեր տատը, երբ նայօղէն մտաւ

—Թաւորակին, ի՞նչ բարի համբաւ. աշխարհը փչացել է, ծնողների և ծերերի յարգանքը կորել է ժամանակիս որդիների և ջանիների մէջ: Օձի լեզու բանեցրի, ամէն տեսակ բարի խորհուրդներ տուի, աղաչեցի, պաղատեցի, որ նա թողնի իւր մտաղրութիւնը, սակայն Մելքոն որդիդ միանգամայն սատանի ձին հեծել է. չէ որ չէ, պիտի առնեմ որ պիտի առնեմ, ասում է:

—Ծնորհակալութիւն, սանահէր կիրակոս. մենք մեր ծնող դական պարտքը կատարեցինք դէպի մեր անառակ որդին, զու էլ քո բարեկամական պարտքը: Այժմ լսեցէք ինձ այ կնիկ, որդի ջան, հարսի, դարձաւ Միքայէլը դէպ իւր կնոջը, որդուն ու հարսին: Երեսի մենք մեղք ենք գործել Աստուծոյ առաջ, որ նա մեզ պատժում է մեր անհնազանդ որդու ձեռքով: Ես իմ զաւակների անժամանակ բաժանումը, իմ տան աւերը չեմ կարող տանել. թասիբս չի վերցնի: Ես առաջարկում եմ որ յօժարիք ինձ հետ ուզենք այդ աղջիկը Մելքոնին, իւր արիւնն իւր գլուխը լինի: Ի՞նչ էք ասում: Սանահէր կիրակոսն էլ այստեղ է. վաղը, Գասպար ջան, վելցուու անահօրը գնա ուզելու և շուտով պսակենք մեր ամօթանքը մեր վիշտը ծածուկ պահելով: Հը, ի՞նչ էք ասում:

Ուրիշ եւը չկար. յօժարեցան: Օդայից տուն գնալիս Միքայէլի մեծ հարսը՝ Սաւակուլը գոգնոցի փեշերով աշքերն էր սրբում: Նրան վիճակուած էր իրեն տեղերակին ապրել Թորոսինց շանսպեր Նազլուիս հետ:

Սեպտեմբերի վերջերին, երբ գիւղացիք կալուկից պըըծան, Մակարենց Միքայէլը որդուն պսակեց: Պսակից յետոյ երբ «Թագաւորն ու թագուհին» եկեղեցուց գուրս եկան, բակում և կտուրներում խմբուած կանանց և աղջիկների հարիւրաւոր աչք նազլուի վրայ ուղղուեցին:

—Տես, տես սանամէր, որքան անհամեստ է. չորս կողմը մտիկ տալով է գնում. տես որքան ուրախ է, ասում է մի նորատի հարս մի կնոջ:

—Գիւղի շէն տներից մէկն աւիրաւ, ասաց մի հեղինակաւոր կին իւր շուրջը խմբուած կանանց, երբ հարսանեկան պարն արդէն հեռացել էր եկեղեցուց, իսկ կանայք սկսան ցըրուել:

Շատ մարդ այդ օր ուրախացաւ հարսանեկան առատ գիւնու և ճաշի շնորհիւ: Բոնազքօսիկ ուրախութիւն նկատւում էր և ծերունի Միքայէլի դէմքին, բայց Շողեր տատի երեսին ժըպիտ անգամ չեկաւ: Պատանեկան բնաւորութեանը հակառակ Մանուէլն էլ մօրից չէր հեռանում այդ օր. կարծես թէ այդ-

հարսանիքը իրենց տանը չէր, ուրախութիւնը իրենցը չէր։ Նա
մօրից չեռացաւ ամենախն և ուրախացող ընկերներին չմիացաւ։

Գ.

Ապարանի հայ նահապետական ժողովրդի մէջ նորահարսը
տան փոքր սպասաւորն է, բայց չէ ծառան կամ ստրուկը (խօսքը
մեծամասնութեան վրայ է), ինչպէս ոմանք զիւղ չտեսած քա-
ղաքացիք գրում ու խօսում են. որովհետեւ նրան տան աւագնե-
րը սիրում են, փայփայում են, որպէս իրենց նոր աշխատաւոր
զաւակի նորահարսը միշտ ոտքի վրայ է լինում տան անդամ-
ներին ծառայելու համար։ Մէկին պէտք է անկողին պատրաս-
տել, միւսին ջուր տալ, երրորդին՝ ոտքերը հանել կամ լուա-
նալ, չորրորդին կորած բանը որոնել, գտնել և տալ եայն,
նորահարսի պարտականութիւնն է։ Մեծերին ծառայելու ան-
տրառնջ և ուրախ պատրաստակամութիւնը, հեղութեան և
խոնարհութեան ընդունուած ձևերի պահպանութիւնը նորահար-
սին սիրելի են դարձնում տան մէջ, երբեմն նոյն իսկ տան
զաւակներից ամելի։ Նորահարսը մի անհնտզանդութիւն ունե-
նալու իրաւունք ունի, որ նոյն իսկ պատկառանքի և համես-
տութեան նշան է։ Նա ամենից աւելի անուշադիր է գէպի իւր
ամուսնու ինդիրը, հրամանը կամ առաջարկած ծառայութիւնը։
Երբ տան մէջ միւս անդամները ներկայ են, ամուսնուն ծառայե-
լը անյարմար, նոյն իսկ ամօթ է։ Իսկ եթէ տան միւս անդամ-
ները հարսի ծառայութեան պէտք չունին, ամուսնու երրորդ
դէմքով առաջարկած ցանկութիւնն էլ կատարում է ըստ երե-
ւութիւն՝ մի արհամարհական ձևով։

Նազլուի հեարմանութիւնը՝ այսինքն այն իմաստով ինչպէս
նկարագրեցինք, մէկ ամիս միայն տևեց։ Այդ ամսում նազլուն
մեծ ոյժ էր գործ դնում իւր վրայ ուրիշ հարսներին նմանիլ։
Տանեցիքն էլ հետզհետէ իրենց կարծիքը նրա մասին գէպի լաւն
էին փոխում. յուսալով թէ այդպէս էլ կշարունակուի։

— Այ կնիկ, ասում էր ծերունի Միքայէլն իւր կնոջը,
մեր հարսն իրեն լաւ է պահում, աստուած տայ մենք սխա-
լուած լինենք. Սաւզով ջան, աղջիկս, դիմում էր ծերունին ա-
ւագ հարսին, սիրիլ նազլուին ինչպէս քո հարազատ քրոջդ,
գուցէ թէ մեր կարծած դեք հրեշտակ լինի. Աստուած իմ օճա-
խին գուցէ կը խնայի. և Թորոսենց էս մէկ աղջիկը լաւ կլինի։
— Հալիւր, պատասխանում էր Շողերը, Աստուած ձէնդ
լի. բայց մեծանակ խօսք է թէ՝ «կաթի հետ մտածը հոգու հետ

կենի» և թէ՝ «եղերը տես՝ կտաւն առ, մօրը տես՝ աղջիկն առաւ ես չեմ հաւատում թէ Նազլուն էս մօր աղջիկը չլինի Յուսանք:

—Նազլու ջան, քեզ մատաղ, ասում էր ամուսինը՝ Մելքոնը իւր կնոջ գիշերուան առանձին պահուն. դու գիտես որ քո պատճառով ես հօրս ու-մօրս աչքիցն ընկայ, Նրանց համաձայնութիւնը զօռով եմ կորզել քեզ հետ պսակուելու համար, առանց նրանց օրնութիւնն ստանալու. այնպէս խոնարհ, հնապանդ եղիր նրանց ու աբուռով կեցիր, որ իմ սև երեսը սպիտակեցնես, ու ես քեզնով պարծենամ նրանց առաջ:

Սակայն Մելքոնի ազդեցութիւնը կարճատև պիտի լինէր: Կար մի այլ ազդեցութիւն, որ Նազլուի գաստիարակութեան հիմքն էր դրել և շարունակում էր զօրանալ նրա վրայ:

Այդ նրա մօր ազդեցութիւնն էր:

—Նազլու ջան, էդ ջները հետդ ինչպէս են վարւում, հարցրաւ մայրը, երբ առաջին անգամ աղջկան տեսութեան էր եկել և խնամոց հետ հարցուբարք անելուց յետոյ, առանձնացել էին մայր ու աղջիկ տան «քօխը»: «Դրանց աչքերը թափի չէին ուզում որ դու իրենց տունը հարս գաս համ: Դրողը տանի էն «գոհզուկ» հալիւորին ու էն քայլուապառ պառաւին. իսկի արժեք որ դու նրանց հարմոնութիւն անես: Բա էն անպիտան Սաւդուլը. նա քեզ վրայ մեծութիւն պիտի անի համ. չէ, ես չեմ թողնի այդ... Դու, Նազլու ջան, լաւ ծառայիր քո մարդուն: Եթէ մի նկատողութիւն, մի ծանր խօսք էլ լսես թէ քո և թէ Մելքոնի մասին, իսկոյն պատմիր Մելքոնին, դեռ մի քիչ էլ զարդարելով, որ հասկանայ թէ իր ծնողներն ինչ պտուղ են:

Նազլուն իւր մօր աղջիկն էր: Նրա ականջին իւր դաստիարակիչ մօր ձայնը սրնգի թովչութիւն ունէր: Մար իրատներն իւր սրտում անեցնելու համար նա պատրաստ հող ունէր:

Մօր մի շարք այցելութիւնից յետոյ էր: Օրերուց մէկ օր ծերունի Միքայէլը շտապով տուն մտաւ և դիմեց հարմաներին, որոնք նատած հաց էին ուտում:

—Հարմաներ, ապրիք, փայտս գտէք տուէք, կոչնակն եկաւ հասաւ մեր կտուրը, շուտով ժամ գնամ թէ չէ չեմ հասնի:

Հրամանը արագապէս կատարելու պարագը իսկապէս նորահարսինն էր:

—Նազլու ջան, Նազլու, հայրիկի փայտը տուր, շտապեցրեց Սաւդուլը տեղիցը կանգնելով: Բայց սա ոչ միայն տեղիցը չկանգնեց, այլ առաջին անգամը տեղերակնոջ հետ լեզուն բանալով պատասխանեց:

— Ինչի՞ դու անկ ես. մի հարս էլ դու ինչի՞ անպատճառ
Նազլուն պիտի ծառայի այդ այլակերպին։

Լսեց ծերունին այդ ձայնը և տեղն ու տեղը քարացաւ։
Սաւգուլը գտաւ սկեսարի ծեռնափայտը և նրան տուաւ։

— Սաւգուլ ջան, լսեցիր, գողդող ձայնով ասաց մեծ հար-
սին ծերունին նրա երեսին նայելով փայտն առնելիս։ Հարսի
ու սկեսարի աշքերն իրար հանդիպեցան. նրանք արտասուբով
փայլում էին։

Ծերունին շուր եկաւ գուրս գալու, Եկեղեցու ճանապար-
հը բռնելիս մտքամոլոր Միքայէլը մի տուն սաղմոս յիշեց ու
ինքն իրեն բարձրածայն արտասանեց. «Ասաց անզգամն ի
սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած»։ Մեղայ քեզ Տէր. երկի
յանցանք եմ գործել քո առջև, որ իմ տանս վրայ այս անէծքը
դրեր յանձին անզգամի։

Նազլուի պսակից մէկ տարի յետոյ խաղաղութեան հրեշ-
տակը խսպառ թողեց Մակարենց տունը. Վաղ առաւօտից մին-
չե ուշ երեկոյ լսելի էր Նազլուի կանչն ու ճիչը. Այստեղ նա
ամենադատարկ պատճառով անսարգում էր տեղերակնոջը, այն-
տեղ պատօած երեսով վշտացնում էր սկեսուրին. մի ուրիշ
տեղ ծաղրում էր անվայել ածականներով ծերունի սկեսարի
ծերութեան տկարութիւնները, խայթում էր տեգորը՝ միշտ լը-
ռակեաց Գասպարին. Շատ անգամ յաջողել էր նրան ստապա-
տիր խօսքերով զրգուել Մելքոնին՝ ամուսնուն տեղերակնոջ և
սկեսուրի դէմ և շատ անգամ էր կնոջ շողոմքոր լեզուն իւր
թոյնը լցրել Մելքոնի սիրու, որ հաւատալով կնոջ խօսքերին
իւր ծնողների և եղրօր երեսն էր թռել, անպատիւ անելով նը-
րանց. Շատ անգամ Մակարենց շէմքը կոխող մուրացիկը, կոչ-
նակով նրանց կտուրովն անցնող ժամկոչ Գասպարը, նախրա-
հաց ժողուող նախրորդ Գրիգորը վրայ էին հասել պատահմամբ
Մակարենց տան կադ ու կռուին, որ տեղի էր ունենում Մել-
քոնի և իւրայնոց մէջ նազլուի բանսարկութեամբ։ Եւ շատ ան-
գամ էին ափառացել այն տունը, որ մօտիկ անցեալում խաղա-
ղութեան և սիրոյ հանգիստ էր միայն։

Նազլուի չար բարքի ձայնը Մակարենց տան պատերից
գուրս եկաւ և գիւղի խօսակցութեան առարկայ դարձաւ. Ափ-
սոսում էին ամենքը Մակարենց օճախը, որ պիտի քանդոէը
(բաժանսամբ) և նախատինք էին ուղղում Նազլուի հասցէին։
Միայն Թորոսենք և յատկապէս Նազլուի մալրն էր որ անէ տուն
ընկած բամբասանքը բերանին պաշտպանում էր ներբողելով

իւր աղջկան և ստայօդ մեղաղբանքներ բարդում Մակարենց տան անդամների վրայ:

Մելքոնի համար պարզուեցաւ բանը. նա պարզապէս գգաց որ երկու խոշոր յանցանք է գործել իւր ծնողների դէմ. մէկ որ անհնազանդ է գտնուել նրանց թորոսենց աղջկան առնելով, մէկ էլ որ կնոջ խօսքերին հաւատալով շատ անգամ անարգել է իւր հարազատներին Երկու յանցանքն էլ երկու իժ օձերի նման գիշեր ու ցերեկ սողոսկելով Մելքոնի սիրառ ուտում, կոծում, լափում էին նրան. Սրտի խաղաղութիւն գտնելու համար, նա սկսաւ կոռւփներով և փայտով մերթ ընդ մերթ թակել կնոջը, երբ վերջինս վէճի էր բռնուած լինում տանեցոց հետ. Մակայն Մելքոնի ձեռքերը յոխնեցան թակելով, բայց նազ-լուի լեզուն չդադարեց աղմկելուց. Խեղճ ամուսինը յուսաքեկ եղաւ. ի՞նչ անէր. կնոջը յետ դարձնէր հօր տունը՝ դժուար բան էր նախ՝ չէր գնայ և երկրորդ՝ էլ ի՞նչ երեսով նա ապրէր այդ գիւղումը Բացի դրանից, նա իւր այրուող սիրառ զովաց-նում էր իւր երկամեայ անդրանկին Պետրոսին համբուրելով, ինչպէս զրկուէր նրանից մօրը յանձնելով. Մոլորուել էր Մել-քոնը. Նրա ատելութիւնը դէպի կինը օրըստօրէ աւելանում էր և բանն այնտեղ հասաւ, որ առանձնութեան մէջ շատ անգամ սայլ քշելիս թէ մաճ բռնելիս, կալ անելիս թէ ոչխար արա-ծեցնելիս նա իւր վշտից ուռչող կուրծքը իշեցնում էր դառն արտասուքներ հոսեցնելով աչքերից:

Ամուսնութեան երրորդ ձմեռը Մելքոնը կամ կրենց կամ «դօրչիների» աղունը պատրուակ բռնելով գնում ջրաղացումն էր քնում, ջրաղացպան Յակոբի մօտ:

Մի գիշեր սանահէր Կիրակոսն աղուն էր բերել աղալու Մակարենց ջրաղացը. Մելքոնը Ջրաղացումն էր. Կիրակոսի աչ-քում նա շատ մաշուած երևաց ու տխուր. Հասկացաւ Կիրա-կոսը թէ նրա սրտումը ցաւ կար, բայց Մելքոնին վիշտ չպատ-ճառելու համար ոչ մի հարցմունք չարաւ այդ մասին. Մելքոնը ծառայի նման կատարում էր սանահէր Կիրակոսի գործը. բեռ-ները քակել, ցորենն օղումի մէջ լցնել, ալրտնից ալիւրը հա-նել, այդ բոլորը Կիրակոսի փոխարէն կատարում էր Մելքոնը, որը կարծես իւր յօժարակամ ծառայութեամբը աշխատում էր մի ծանր քար գլորել իւր ճնշուող սրտից. Նա նոյն իսկ ուղիղ չէր նայում սանահօր երեսին, կարծես նրա դէմ մի յանցանք գործած լինէր. Երբ նրանք պատրաստում էին հանգստանա-լու Մելքոնը դարձաւ Ջրաղացպանին.

— Յակոբ ջան, այսօր դու գնա ձեր տունը քնիր, երե-լուրսե

իսաներիդ տես. ես միայն կմնամ այս գիշեր այստեղ և սանաւ հօրը կօդնեմ. Զրաղացպանը սրտի գոհութեամբ տուն շտապեց:

Մելքոնի սիրտը լցուել, ուռել էր ներքին յուզմունքից. նա ուզում էր մէկի առաջ իւր սիրտը բանալ և այդ մէկը միայն սանահէր Կիրակոսը կարող էր լինել, եւ ահա նա պատրուակով Զրաղացպանին տուն զրկեց:

Կիրակոսը թիկն տուաւ Զրաղացի աղքատիկ անկողնին. իսկ Մելքոնը մէջքը սեանը դէմ տալով ծնկների վրայ նստեց նրա դիմացը ու գլուխը բարձ ձգելով դէպի գետին, ընկղմուեցաւ մտածութեան մէջ. Հասկացաւ Կիրակոսը թէ Մելքոնը դարդ ունի սրտումը, ուզում է բայց չի կարողանում արտայայտել, ու ինքը օգնութեան հասաւ.

—Քաւոր Մելքոն, փոքրիկդ ինչպէս է, առողջ է, բաւորան կնոջ պէս սիրժն է:

—Օղորմի հօրդ սանահէր, որ խօսք բացիր, թէ չէ սիրտս պիտի պատուէր, եթէ չխօսէիր: Ու խեղճ Մելքոնի աչքերից ժայռից դէպի ցած յանկարծակի թափուող հեղեղի նման հոսեցին արտասուրքները:

—Երեխայ խօ չես, սիրելի, ի՞նչ եղաւ բեղ, ամօթ չ՞ որ լաց ես լինում. ի՞նչ կայ լալու, փառք Աստուծոյ, —աշխատեց հանգստացնել նրան Կիրակոսը:

—Ռւզիղ ես ասում, սանահէր. ոչ սրտիս կրակը կարող է այրել ոչնչացնել իմ յանցանքը, ոչ արտասունքս կարող է լուանալ իմ խղճիս վրայ թանձր նստած յանցագործութեան մոխիրը: Ռւզիղ է, իզուը եմ լալիս, բայց արցունքս զսպելու ոյժ էլ չի մնացել մէջս: Սանահէր, Կայէնը միայն իւր Արէլ եղբօրն սպանեց ու Աստուծոյ անէծքին արժանանալով դադար չունէր աշխարհքի վրայ: Ես ոչ միայն եղբօրս, այլ և հօրս ու մօրս, ամբողջ մի գերզաստան եմ սպանել ու Կայէնից շատ աւելի անէծք եմ ժառանգել ու նրանից աւելի եմ տանջլում: Ծնողներս կենդանի մեռած են և ես եմ սպանիչը անհնազանդութեան դանակով: Ես մոլորուեցայ ու սատանի տնից օրհնութիւն բերելու գնացի, բայց սատանան իւր ունեցած՝ անէծքը տուաւ ինձ: Իմ կինը դիւական ծնունդ է ու իմ թշուառութեանը չափ չկայ: Երեքտարի է որ մեր տունը ինդում չի տեսել իմ անըդգամ կնոջ երեսից: Զեռքս անարժան արինով շաղախել չեմ կարող, մանաւանդ որ կինս սիրելի տղեկիս մալրն է. միւս կողմից՝ չարութիւնը զապել չեմ կարողանում, որին զոհ են դառնում ծնողներս: Միայն մի ելք եմ մտածել, սանահէր. տուր քո բարի խորհուրդդ ինձ անպիտանիս, որ քո խօսքն էլ

շանցի, երբ պէտք էր լսել: Սանահէր Կիրակոս, մտածել եմ հօրս, մօրս ազատել կնոջս ձեռքից: Դրա համար մի հնար կայ միայն. ուզում եմ բաժանուել. մի «Քօխտիկ» շինել, որ իմ անիրաւ կնոջս, որպէս վիզս ընկած մեղքս, առնեմ և հեռանամ հայրական օճախիցս, որի յարկի տակ մնալու արժանի չենք ոչ ես և ոչ կինս: Ի՞նչ ես ասում, սանահէր:

—Ուղիղն ասեմ, քաւոր Մելքոն, այդ մտքիդ շատ եմ հաւանում. դա քո ազնուութիւնն է Եղածն անդառնալի է, այդ քո բաղրն է, բայց մեղք են ծնողներդ, նրանց խղճալ պէտք է: Ես էլ շատ եմ ցաւում որ կինդ այդպէս դուրս եկաւ, բայց չեմ կարող ծածկել, որ ամէնքն էլ չեն հաւանում նրա վարմունքը ձեր տան հետ կաւ էլ էն է, որ բաժանուես, թէ ծնողներդ մի քիչ հանգիստ կը լինին, թէ խօսք ու զրոյցն էլ կպակսի:

Մելքոնը թեթևացած սրտով մեկնուեց սանահէր Կիրակոսի կողքին և ջրաղացաքարի միալար գոգոցցի և չախչախի միապաղաղ չխէչխկոցի ազդեցութեամբ հանդիստ քուն մտաւ:

Հետեւեալ օրը մինչև երեկոյ Մելքոնը տուն չգնաց. նրանում հայրական տնից բաժանուելու վիշտը և անխուսափելի անհրաժեշտութիւնը կատաղաբար կուում էին և Մելքոնը ոյժ գործ դնելով իւր վրայ աշխատում էր բաժանման վճիռը զօշացնել իրենում:

Արևը վաղուց մայր էր մտել, երբ նա տուն եկաւ: Նա յուշիկ քայլերով տուն մտաւ: Տան ճրադը վառած չէր: Երդիկի աղօտ լուսով նա նկատեց, որ երեխայի օրօրոցի կողքին փըռուած քնած է կինը և ուրիշ ոչ ոք չկայ: Նա մի վայրկեան կանգնեց, նայեց կնոջ վրայ և բոցոտ հառաչանքով մրմթջաց. «Երանի թէ էլ չվերկենայիր», Նա հայեացքը դէպի մանկան օրօրոցը դարձեց ու չգիտենք ինչ անցաւ մտքով, աչքերն արցունքով լցուեցան: Շտապեց դուրս գնալ և մտնել «յօդէն» ուր՝ հաւատացած էր թէ կգտնի ծնողներին, եղբարցն ու հարսին:

Մերունի Միքայէլը յօդայի աջ թմբան վերի ծայրում, բուխարու մօտ ծնկները ծալած և մէջքովը սեանը յենուած նըստած էր թութունի երկար չիրուխը ձեռքին ու ծխում էր ծանր, հանդարտ ներշնչումով և արտաշնչումով: Նրա դիմացը միւս թմբան վրայ աջ արմունկին յենուած ու ձախովը քնած Մանուէլի իրանը գրկած թինկնած էր Շողեր տատը: Նրա ոտքերի տակը նստած էր Սաւգուլը, իսկ հօր ոտքերի մօտ՝ Գասպարը: Նրանը լուր և մտախոն էին, երբ Մելքոնը ներս մտաւ:

—Մելքոն ջան, որդի, դարձաւ նրան հայրը քաղցր յանդիմանութեամբ, ախը քեզ ի՞նչ է եղել, որ տուն չես գալիս.

փառք Աստուծոյ ջրաղացպան ունինք: Օր ու գիշեր տուն չեմ գալիս: Մենք էլ անհանգիստ ենք լինում: Մայրդ էլ այսօր քեզ համար լալով քոռացաւ. ուզում էր զալ ետևիցդ, ես չթողի թէ ցուրտ է:

Մելքոնն առանց մի բառ անգամ պատասխանելու անշարժ կանգնած մնաց յօդի մուտքում: Լոեցին և միւները՝ Յանկարծ նա օրօրուեց, անհաստատ քայլերով յառաջ եկաւ և եղքօր դիմացը հօր առջևը կանգնեց ու սոսկալի ոյժ գործ դընելով իւր վրայ դարձաւ հօրը կցկառուր և դողդող ձայնով.

—Հայրիկ... նանի... Գասպար... Սաւզուլ ջան... ես... ես... ես ուզում եմ ձեզնից բաժանուելի, ես արժանի չեմ էս տան յարկումը մնալու: Աստուած պատճեց ինձ իմ անհնաղանդութեան համար: Ես արժանի եմ, որ մի անզդամի ձեռքուժ տանջուիմ, բայց դուք անպարտ էք և չպէտք է տանջուիք: Հայր, տուր քո անպատկ որդուդ մի հեռաւոր անկիւն, որ ես քարշ տամ տանեմ անէծքը քո օրհնեալ տնից: Թոյլ տուր բաժանուեմ, հայր, և... և...

Էլ չկարողացաւ Մելքոնը խօսքը շարունակել. Նրա ծընկները ծալուեցին և նա ընկաւ գետին, ձեռքերը հօր ոտքերին փարելով:

Կարծես ցամքեց արիւնը ծերունու սրտում. արձան դարձաւ նա: Շողեր տատը ներքին մումուլից մի ճիչ արձակեց և հունքուր-հունքուր հեկեկաց: Սաւզուլը խեղդուած հեծկլտանքով ծնկաչոք տագեր վզովը փարուեցաւ անվերջ համբուրներ դրոշմելով նրա գլխին: Իսկ Գասպարը մողիկ մողիկ լաց եղաւ, ինչպէս մի մատաղահաս տղայ:

Երբ արտասուքի առաջին յորձանուտ տարափին անցաւ ու սրտերը փռքը ինչ հանգստացան, ծերունի Միքայէլը որդութեացը բարձրացնելով նստեցրեց թմրան վրայ, ցամքած ձեռքերով գրկեց նրա գլուխին ու պաղ շրթունքներով հպաւ ճակատին: Ապա ձախ ձեռքը նրա ուսի վրայ դնելով խօսեց.

—Մելքոն ջան, գառնուկս, սիրտ թող չնեղանայ: Դու էլ մեղաւոր չես քո ամուսնութեան մէջ: Վնաս չունի, բաղդ է զա, ճակատագիր: Թո կինն էլ մեր որդին է. վնաս չունի, երիտասարդ է դեռ, թերևս լաւանայ: Բայց եթէ, որդի, յուզուած ձայնը բարձրացրեց ծերունին, եթէ նազուի սիրտը նոյնիսկ դերի լէգէօնի բնակարան լինի, եթէ ամեն օր անլուր անարդանը տայ ինձ ու մօրդ, եթէ շիկացած երկաթով ծերացած աչքերս փորէ, ես աւելի լաւ կհամարեմ այդ ամենը տանելք քան իմ կենդանութեան ժամանակ յօժարել որ գու ուրիշ յար-

Ակ տակ ապրես, որ իմ շէն տունս քանդուի, իմ օրով իմ տը-
ղէրքս բաժանուին: Զէ, որդի, այդ իմ թասիրս չի տանի: Իմ
անցումով ետե, դռ գիտես: Ի՞նչ ես ասում Գասպար ջան,
Սաւզուլ ջան, վերջացրեց ծերունին որդու և հարսի հաւանու-
թեանը դիմելով:

Երկումն էլ չկարողանալով խօսք արտասանել իրենց ան-
կեղծ հաւանութիւնը գլխի նշաններով հասկացրին ծերունուն:

Մելքոնը զինաթափ եղաւ: Նա այս անգամ չուզեց հօրն
անհնազանդ լինել: Նա էլ իւր մտքումը վճիռ արաւ լոռութեամբ
կրել վիշաը այն մեծահոգի հարազատների հետ, որոնք այնչափ
սիրում էին նրան և որոնցից բաժանուելն իսկապէս մահուա-
նից առաւել դառն պիտի լինէր հէնց իրեն համար:

ՊԱՏՐԻԿ

(Վերջը միւս անգամ)
